

Հ. Ա. Մուրադ



ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԸ

ԹՈՔԱԽՏԸ

ԵՒ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

„Dove il sol, non e il medico“

(«Ուր արև կայ, այնտեղ բժշկի հարկ չը կայ»)

Իր-լու-ն խո-լը-լու-ն - - -

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ան Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, Պուշկինեան փող. № 3.

1912.

616.9

Կ-69

P. M. Zhetysay

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ — ԹՈՔԱԽՏԸ

ԵՒ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

„Dove il sol, non e il medico“
(«Ուր արև կայ, այնտեղ բժշկի հարկ չը կայ»)

Իրավուն թողություն արած

ԱՐՏԱՏՊՈՒՄՆ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, Պուշկինեան փող. № 3.

1912.

18 MAR 2014



8324-56

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Աքաթումանում նոր կառուցվելիք Արօզինդա սանատորիայի հիմքը օրհնելու առիթով—որ տեղի ունեցավ անցեալ 1911 թվականին—ես խոստացել էի սանատորիաների մասին գրել:

Անելի նպատակայարմար դատեցի դեռ տուբերկուլօզի մասին խօսել եւ ապա սանատորիաների մասին:

Այս աշխատութեանս մի մասը՝ առաջինը՝ քաղված է դասախօսութիւնիցս, որ ես արեցի Մանթաշեան առեւտրական ուսումնարանի բարձր դասարանների աշակերտներին անցեալ 1911 տարվայ ապրիլի 20-ին՝ «Սպիտակ ծաղիկի» օրը:

Ամբողջ այս աշխատութիւնս մաս-մաս տպագրված էր «ՄՇԱԿ» թերթում այս 1912 տարվայ յունվարից սկսած:

Տուբերկուլօզը եւ մասնատրապէս թորախտը այնպիսի նիւթերից է, որ ինչքան էլ գրելու եւ ասելու լինեն նրա մասին, նա միշտ իր հետաքրքրութիւնը կը պահպանէ ընթերցողի առաջ:

*
* *

Այսօր չէ, որ յայտարարում եւ ասում են, թէ աշխարհիս երեսին չը կայ մի կլիմայ, որ իսկապէս բուժիչ համարվէր թորախտի համար:

Եւ սա շատ ճիշդ է:

Երբ սրան հակառակ կարծիքն էր տիրում, այսինքն երբ մարդիկ հաւատացած էին, թէ կլիման եւ տեղի բարձրութիւնը մի բացառիկ եւ մասնական (սպեսիֆիկ) նշանակութիւն ունի տուբերկուլօզի եւ թորախտի—մանաւանդ այս վերջինիս—բժշկութեան հարցում, Եւրօպայում՝ Զվիցերիայի, Փրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Անգլիայի եւ ուրիշ պետութիւնների զանազան բարձր վայրերում կառուցվեցին այսպէս անուանված

«Բարձրադիր սանատորիաներ» (Sanatoria d'altitude), մանաւանդ որ զանազան երկիրների բժշկներն էլ ցոյց էին տալիս, թէ բարձր դիրք ունեցող տեղերի բնակչութիւնը կամ բոլորովին ազատ է թոքախտից, կամ թէ այս վերջինս նրանից շատ քիչ զոհ է տանում: Այսպէս, օրինակ, Ամերիկայի Միացեալ Մահանգներում նկատված է, որ 1700—2300 մետր բարձրութեան վրա 100 մահացու դէպքից 2,82—10-ն է միայն թոքախտին պատկանում, մինչդեռ ցածր վայրերում այս թւերը 20—25-ի են հասնում:

Միւս կողմից էլ մանրէաբանական (բակտերիօլոգիական) հետազոտութիւնները գալիս էին հաստատելու, որ 1200 մետրից աւելի բարձր տեղերում թոքախտի պատճառը, Կօխի բացիլը, համարեա բոլորովին բացակայում է:

Եւ բարձրադիր տեղերի թոքախտից իբր թէ զերծ լինելը իր ժամանակին ոգետուել էր թէ բժշկներին, թէ հիւանդներին եւ թէ հասարակութեանը:

Սակայն արդէն անցեալ դարի 70-ական թւականներից այս հայեացքը լուրջ քննադատութեան առարկայ է սկսում դառնալ:

Այսպէս՝ բժիշկ Մարշալը բացազանչում էր.

«Եթէ աշխարհիս երեսին իսկապէս գտնվէր մի այնպիսի երկիր, ուր բնաւ չը լինէր թոքախտ, ահա ուրտեղ պէտք է տեղափոխվէին թոքախտաւորներն իրանց սերունդների հետ միասին»:

Մի ուրիշ գիտնական, անգլիացի Թէօդօր Վիլլիամսը, նմանապէս բողոքում էր իրականութեանը անհամապատասխանող այս հիացմունքի դէմ:

«Երբ մենք զննում ենք ու քննում թոքախտից իբր թէ ազատ վայրերը,—ասում էր նա,—այնպիսի հակասութիւնների ենք հանդիպում, նրանց կլիմայական պայմանների վերաբերմամբ, որ նրանց՝ այդ վայրերի՝ ախտազերծութիւնը (իմունիտետը) հազիւ թէ կարելի լինի վերադրել միայն կլիմայի ազդեցութեանը. դա իսկապէս հետեանք է այն առանձնայատկութիւններին, որ ունեն կեանքն ազատ օդում, սնունդը և տեղական բնակչութեան սովորութիւնները:

Ի՞նչ նմանութիւն կարող է լինել Իսլանդիայի փոփոխական կլիմայի և Թուրքեստանի ցուրտ տափաստանների (որոնք ծովի մակերևոյթից էլ 100 կանգուն ցածր են) և Անդերի բարձր լեռնադաշտերի միջև, որոնք 8000—10000 կանգուն բարձրութեան վրա են գտնվում ծովի մակերևոյթից:

Ուրեմն այս չէ կարող մեզ համար ուղեցոյց լինել կլիմայի բնորոշեան մէջ, որովհետեւ այդ երկիրների բնակիչների կենցաղը միայն շատ ճշգրիտ կերպով բնորոշակելով կարելի կը լինէր թոքախտի տրամադիր մարդկանց հետու պահել այս հիւանդութեան զարգացումներից»:

Ակներեւ է, թէ որեւէ հիւանդութեան ախտազերծութիւնը բժշկելիութեան համանիշ չէ, որովհետեւ միայն սարերի մաքուր օդը չէ, որ արգելում է վարակմանը կատարել իր գործը արդէն հիւանդոտ մի մարմնակազմի մէջ: Ուստի թոքախտաւորները բան չը պէտք է սպասեն վայրերի ախտազերծութիւնից, մանաւանդ որ այս վերջինս համանիշ չէ մարդկանց ախտազերծութեանը: Միւս կողմից կայ եւ ՅԵՂԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ, որի մասին զուր են լուրջօգուտ վարակման: Այդ անվում է դիտմամբ, որովհետեւ այս վերջինս շատ լաւ է նպաստում սանատորիաների շահերին, ընդգծելով իբր թէ նրանց կարեւորութիւնը, մինչեւ անգամ անհրաժեշտութիւնը:

Մինչեւօրս ճշտվում են Լօմբարդիերքեմիսսածները.

«Լեռնականների մօտ ախտազերծութիւնը հետեանք է նրանց կլիմայի դարաւոր ազդեցութեան, որը կամաց-կամաց կազմել է մի այնպիսի ժառանգութիւն և ցեղ, որը արդէն իր մէջ է պարունակում ախտազերծութիւնը: Նորեկը հազիւ թէ կարողանայ անմիջապէս սրանից օգտվել, մանաւանդ եթէ նա իր հետ բերելու լինի ոչ միայն ախտակրութիւն, կամ հիւանդութեան տրամադրութիւն, այլ և արդէն զարգացած հիւանդութիւն»:

Այսպէս է ասում եւ յայտնի Հիւշարը, այսպէս են խօսում Եւրօպայի յայտնի հեղինակաւորները:

Մեզնում հասարակական միտքը սկսում է շարժվել յօգուտ ժողովրդական առողջութեան: Այսպիսի մի լուրջ եւ վսեմ գործում պէտք է աշաւորջ կերպով վարվել, որպէսզի միջոցները չը շեղվեն իրանց բուն նպատակից:

Եւրօպայում, ուր մարդուս կեանքը աւելի թանգ արժէք ունի, ուր մարդուս առողջութիւնը հասարակութեան աւելի խոր մտածված խնամքի եւ հոգատարութեան առարկայ է դարձել, մանաւանդ վերջին 3—4 տասնեակ տարիների ընթացքում, եկել են այն եզրակացութեան, թէ առհասարակ տուբերկուլօզի եւ մասնաւորապէս ու գլխաւորապէս թոքախտի դէմ մաքառելու գործը ամենաաջող եւ ամենաարդիւնաւոր կերպով կատարում են ԴԻՍՊՆՍԵՐ-հիմնարկութիւնները քաղաքներում եւ առհասարակ մարդաշատ վայրերում:

Սանատորիաները եւ նման փակ բուժարաններն աւելի մասնաւոր նախաձեռնութեան համար արդիւնաբեր հաստատութիւններ պէտք է համարվեն: ԱՐԴԻԻՆԱԲԵՐ-ը նիւթականի մտքով է ասված:

Ես չեմ հերքում եւ բացասում այն օգուտը, որ ստացվում է սանատորիաներում: Բայց երբ հարց ենք դնում, թէ հասարակութիւնը տուբերկուլօզի եւ թոքախտի դէմ մաքառելու համար ի՞նչ պիտի անէ, ի՞նչպիսի նախաձեռնութիւնների նա դիմէ, Եւրօպայի փորձը աչքի առաջ ունենալով՝ համոզվում ենք, որ ամենանպատակաշարմարն ու օգտաւէտը դիսպենսեր-հիմնարկութիւններ հիմնելը կը լինի:

Բացի ընդհանուրին լայն մատչելիութիւնից՝ դիսպենսերների մի առաւելութիւնն էլ նրանումն է, որ նրանք մեծ ծախսեր չեն պահանջում, ինչպէս սանատորիաները:

Փոքր ծախսով մեծ արդիւնք ստանալ՝ սա պէտք է լինի մի հասարակութեան նշանաբանը՝ լօզունգը:

Եւրօպայի փորձը թո՛ղ մեզ համար լինի ամենալաւ ուղեցոյց տուբերկուլօզի եւ թոքախտի դէմ մաքառելու գործում:

Սակայն ինչո՞ւ միայն տուբերկուլօզի եւ թոքախտի դէմ ենք զինվում: Մի՞թէ սրանք են միայն մեր ժողովրդի թանգագին առողջութիւնը հալումաշ անում եւ թունաւորում:

Ինչո՞ւ լայնածաւալ հսկողութեան տակ չը դնել ժողովրդի կեանքի բոլոր այլանդակութիւնները: Խօսքս, ի հարկէ, միայն առողջութեան տեսակէտին է վերաբերում:

Առողջապահութիւնը իր բոլոր ճիւղերով մտցնել կեանքի մէջ—ահա՛ հասարակութեան անելիք միակ գործը, եթէ նրա համար իսկապէս որ թանգ է ժողովրդական առողջութիւնը:

Օ՛ն, ուրեմն, դէպի գործ:

ԲԺ. ԱՐՏԱՇԷՍ ՇԽԵԱՆ

1912 թ. Ապրիլ
Թիֆլիս

11

Գլուխ	Երես
ԱՌԱՋԱԲԱՆ	3.
I ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՁԻ ՍԱՂՄԸ	9.
II » ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ	14.
III » ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	20.
IV ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ	25.
V ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՐՈՒԵՍՏԻ ԸՆՏՐՈՒ- թԻՒՆ	31.
VI ԵՒՐՕՊԱՅԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ	35.
VII ԱՌՈՂՋԱՆՈՑՆԵՐ	40.
VIII ԴԻՍՊԵՆՍԵՐՆԵՐ	44.
IX ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ	50.
X ՎԵՐՋԱԲԱՆ	56.



ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՁԻ ՍԱՂՄԸ

Այս օրվայ օրը, ապրիլի 20-ը, Ռուսաստանի կեանքի համար ուշագրաւ և յիշվելու արժանի օր կը մնայ:

Եւրօպական պետութիւնների նման՝ լայնատարած Ռուսաստանն այսօր իր գլխաւոր, առաջնակարգ դիրքերում պաշտօնապէս պատերազմ է յայտարարել մարդկութիւնը դադող ահարկու խարազանին և կործանիչին, անխիղճ թշնամուն այն ամենի, ինչ որ ջահել է, ինչ որ քնքոյշ է:

Խօսքս տուբերկուօղի մասին է:

Աշխարհիս մահացութեան մի-եօթներորդը նրա կործանիչ գործունէութեան արդիւնքն է:

Սարսափելի, զարհուրելի մի թիւ:

Ուրեմն ինչքան մեծ պէտք է լինի մեր հրճուանքը, երբ վերջապէս այսօր՝ մեր լայնատարած պետութեան ազգաբնակչութեան բոլոր խաւերի գիտակցութեան մէջ յղանում է մի ընդհանուր վճիռ և ցանկութիւն, այն է՝ ընդհանուր ոյժերով, լսելով գիտութեան, նաև ընդհանուր և անհատական առողջապահութեան հրամանները, ազատվել և ազատել ուրիշներին մարդկութեան այս խկապէս ահարկու թշնամու ճիրաններից:

Ի՞նչ է տոռերկոյօզը, ո՞րն է նրա կերպարանքը, ֆիզիօնօմիան—անա իմ այսօրվայ առարկան ևս միևթը:

Ո՞վ է յաղթում իր թշնամուն:

Ի հարկէ նա, ով հիմնովին ծանօթ է այդ թիշ-

նամու հետ, նրա բնաւորութեան, նրա սովորութիւնների, նրա հակումների և տրամադրութիւնների. ով լաւ է ուսումնասիրել այն պայմանները, որոնց շնորհիւ իրան լաւ է զգում այդ թշնամին. այն միջոցորտը, առանց որի և անհնար է նրա աջող գործունէութիւնը:

Ուրեմն, այս այսպէս լինելով, թոյլ տուէք ինձ ծանօթացնել ձեզ ընդհանուր դժերով, թէ ինչպէս է տուբերկուլօզը ծագում, և յիշատակել այն միջոցները, ճանապարհները, որ ընտրում է մեր այդ թշնամին մեզ հասնելու համար, այն պայմանները, որոնց շնորհիւ մեր մարմնի շինուածքը՝ նրան յաղթելու ոյժերը չունենալով՝ ինքն է ընկնում, նաև գիտութեան այն զէնքերը, որոնց շնորհիւ այժմ մենք աջող կերպով մաքառում ենք նրա դէմ և որոնց շնորհիւ այժմ տուբերկուլօզը արդէն հասցւած է ըլուծելի հիւանդութիւնների կարգին:

Տուբերկուլօզ ուրիշ խօսքով ասվում է՝ բարակացաւ:

Բարակացաւ ասվածը, նուազումն, առհասարակ յատկանիշն է այն բոլոր հիւանդութիւնների, որոնք առաջացնում են մարմնի հիւսուածքների սպառումը, որը և աւելի ու աւելի աճելով ու զարգանալով մահացնում է հիւանդին, մինչև անգամ եթէ նա ստանում է սնունդի բաւարար քանակութիւն:

Մեզ հասած պատմական տեղեկութիւնները վկայում են, որ բարակացաւ ամեն ժամանակաշրջաններում մարդկութիւնից անհամար զոհեր է տարել:

Տեղը չէ բերելու այն պատմական նկարագրութիւնը, թէ զանազան ժամանակներում ինչ հայեացքներ են եղել տուբերկուլօզի մասին:

Եղել են շատ վիճելի տեսակէտներ. մի քանիսը բաւական մօտեցած են եղած այդ հիւանդութեան վրա մեր ունեցած այժմեան հասկացողութեանը:

Այսպէս օրինակ՝ յայտնի գիտնական Լենեկը իրաւունք ունէր տուբերկուլօզը համարելու ոչ թէ իբր մի մասնական հիւանդութիւն, այլ ամբողջ մարմնակազմի ընդհանուր հիւանդութիւն: Միւս կողմից՝ գիտնականների մի շարք իրանց հետազօտութիւններով, փորձերով ապացուցել էին, որ տուբերկուլօզը տարափոխիկ հիւանդութիւն է. յայտնի չէր միայն թոյնի սաղմը:

Եւ ահա միայն նորերս վախճանված պրօֆ. Րօբերտ Կօխի հանձարին էր վիճակված գտնել տուբերկուլօզի յատկական սերմանողին, այսպէս անուանված Կօխի քսցիլլը (մանրէն):

Մեզ համար այժմ միանգամայն ապացուցված է, որ թոքերի տուբերկուլօզը, թոքախտը, բարակացաւ տարափոխիկ հիւանդութիւն է, որը իր բոլոր զանազան արտայայտութիւններում ներկայացնում է այսու ամենայնիւ միևնոյն հիւանդութեան տեսակներ:

Տուբերկուլօզային հիւանդութիւնների, ուրեմն և թոքախտի պատճառը տուբերկուլօզի բացիլն է:

Մեր մարմնի շինուածքի համարեա ամեն մի հիւսուածք պարարտ հող կարող է դառնալ, երբ նրա մէջ մտնելու լինի տուբերկուլօզի բացիլը: Այսպէս՝ մենք տեսնում ենք, որ նա, բացիլը, զարգանում է թոքերի, կոկորդի, աղիքների, միզասեռական գործարանների, ոսկորների և ուղեղի թաղանթների մէջ:

Բայց ամենից շատ յաճախ մենք տեսնում ենք թոքախտը. սա շատ տարածված է:

Ինչպէս ես վերը յիշեցի, թոքախտին է պատկանում ընդհանուր մահացութեան $\frac{1}{7}$ մասը, իսկ եթէ թոքախտը համեմատելու լինենք թոքերի ուրիշ երկարատե, քրօնիկական հիւանդութիւնների հետ, այն ժամանակ այդ թիւը կը դառնայ $\frac{2}{3}$ -ին:

Տուբերկուլօզի բացիլը ուղղակի թոքերին է հասնում գլխաւորապէս շնչառութեան միջոցով, և այս

պատճառով էլ աւելի յաճախ թոքախտը մենք գրտնում ենք այնտեղ, ուր մարդիկ կուտակված են ապրում: Զարմանալի չէ ուրեմն, եթէ մեծ քաղաքներում, գործարաններում, զինւորանոցներում, բանտներում, խիստ և ապականված օդ ունեցող բնակարաններում թոքախտը շատ յաճախ է երևում, աւելի յաճախ՝ քան թէ ազատ տեղերում:

Եթէ կենդանիներին շնչել տանք չորացած տուբերկուլօզային խորխը, կարելի է ամեն անգամ նրանց մէջ առաջացնել թոքերի տուբերկուլօզ: Կենդանիների վրա արված այսպիսի փորձերի հիման վրա պէտք է ընդունել, որ և մարդու թոքերի տուբերկուլօզը զարգանում է գլխաւորապէս տուբերկուլօզի նիւթը, սաղմը շնչելուց:

Զանազան միջոցներով է օդի հետ խառնվում տուբերկուլօզի վարակիչ նիւթը:

Գլխաւոր վտանգը և միջոցը պէտք է փնտռել թոքախտաւորների խորխի մէջ, որը շատ հարուստ է տուբերկուլօզի բացիւններով և արտադրվում է անագին քանակութեամբ:

Երբ խորխը չորանում է, նա շատ հեշտութեամբ փոշի է դառնում և տարածվում, խառնվում մեզ շրջապատող օդին և այդպիսով կարող է շնչառութեան ժամանակ թափանցել մեր թոքերը:

Թոքախտաւորի խորխը ինչքան էլ որ չորանալու լինի, այսու ամենայնիւ չէ կորցնում իր վարակիչ, թունաւորող յատկութիւնը: Ամիսներ, շաբաթներ անցնելուց յետոյ էլ կարելի է լինում այդպիսի խորխի միջոցով առաջ բերել թոքերի տուբերկուլօզը: Տուբերկուլօզի բացիւնների մատղաշ սերունդները զարմանալի դիմացկուն են. մինչև անգամ 205 օրից յետոյ էլ դրական արդիւնք է ստացվել, եթէ այդպիսի խորխը շնչել են տուել ճագարներին. սրանք միշտ վարակվում են տուբերկուլօզով:

Քանի որ չոր խորխը այդքան երկար ժամանակ պահպանում է իր վարակիչ յատկութիւնը, դժուար չէ հասկանալ, որ վարակման պատահական պատճառները կարող են շատ բազմատեսակ լինել: Որտեղ նստելու լինեն օդի միջոցով բերված չորացած այդպիսի խորխի մասնիկները, այնտեղ էլ կը գոյանայ տուբերկուլօզի վարակման բունը:

Այս միջոցներով օդի բերած տուբերկուլօզի բացիւններ գտնվել են երկաթուղու վագոնների բարձերի մէջ, գորգերի փոշու մէջ, հիւանդների աթոռների մէջ և այլն:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕՋԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

Վերը ես ասացի, որ ուր էլ ընկնելու լինի Կօխի բացիլը, այնտեղ կը գոյանայ տուբերկուլօզ:

Օրինակներ են հարկաւոր:

Ահա մի երեխայ, հազիւ մի քանի ամսական:

Յանկարծ նա մերժում է իրան մատուցված մինչև այդ օրը քաղցր ծիծը, ալեկոծվում է, փսխում է, լալիս է, մի խօսքով՝ շրջապատի համար շատ պարզ է, որ նա տանջվում է: Նրա մարմնի ջերմութիւնը բարձրանում է: Մի քանի օր անցած՝ ծնողները ողբում են իրանց հրեշտակիկի կորուստը: Ի՞նչ է պատահել: Ահա թէ ինչ. գլխի ուղեղի թաղանթի մէջ ամփոփված Կօխի բացիլները սկսել են իրանց գործունէութիւնը և առաջացրել մի մասնական բորբոքում, որ և վերջ է տուել խեղճ փոքրիկի ծաղիկ կեանքին: Ահա այս է ուղեղի թաղանթի տուբերկուլօզային բորբոքումը (մենինգիտ), որ երևում է զարմանալի յամառ կերպով մանաւանդ այն օջախներում, ուր ծնողները իրանք ևս տուբերկուլօզից զերծ չեն:

Ահա ձեզ և մի ուրիշ երեխայ՝ 3—4—5 տարեկան՝ շատ հիւանդոտ արտաքինով, ահագին փորով, որի մէջ յաճախ ցաւեր են զգացվում, կաշուի տակը ուռած ու լայնացած կապուտակ երակներ: Եթէ ուղեւայիք իմանալ այս ցաւի պատճառը, կը տեսնէիք աղիքներից մինը խոցոտված և շրջապատված խոշոր ու ուռած խուլերով, որոնք թաղանթն են ծածկում: Այս խուլերը լեփ լեցուն են մանրէներով և թոյնով: Այս՝ փոքրիկ երեխաների աղիքների ու խուլերի տուբերկուլօզն է:

Տեսէք և մի ուրիշ մարդու, ըստ արտաքինի ամուր և առողջակազմ: Երկար ժամանակից ի վեր

նա տանջվում է մարսողութեան խանգարումներից, որ վերադրել են նրա ստամոքսի և աղիքների մարսողական թուլութեանը: Նշանակած մի քանի հանքային ջրեր գուցէ և սկզբում օգնած լինեն: Սակայն մի օր խոշորացոյցը նրա կղկղանքի մէջ երևան է հանում Կօխի բացիլներ: Դժբաղդաբար արդէն ուշ է: Կօխի բացիլը իր ընթացքն է շարունակում և աղիքների տուբերկուլօզը մեռցնում է հիւանդին, թէև ձեռնարկել են փրկութեան շատ միջոցներ:

Մարսողական ճանապարհների տուբերկուլօզը մինչև օրս նկատելի ուշադրութեան չէր արժանացած. մի քանի տարի սրանից առաջ աղիքների խոցերն էին միայն նկարագրվում: Բայց այժմս արդէն յայտնի են աղիքների սկզբնական տուբերկուլօզային վերքերը, ինչպէս և նոյնանման վերքեր լեզուի, շրթունքների, նշաձև գեղձերի, կոկորդի և այլն:

Ձեզ մօտ գալիս է մի գեղեցկատեսիլ երիտասարդ, որը թէև երբեմն հազում է, բայց ընդհանրապէս իրան շատ լաւ է զգում: Նրա թոքերում դուք ոչ մի կասկածելի նշան չէք գտնում: Յանկարծ մարմնի ջերմութիւնը բարձրանում է ու այնպիսի նշաններ են մէկը միւսի ետեւից երևան գալիս, որ մերձաւորները կարծում են, թէ տիֆ (շօբա) է սկսվում: Հարկաւոր միջոցները ձեռնարկվում են: Մի քանի օրից հիւանդը մահանում է: Անդամահատութեան ժամանակ ակներև է լինում, որ հիւանդը փորի թաղանթի տուբերկուլօզ է ունեցել:

Ահա և հետևեալ տխուր դէպքը: Չահիլ նազելի մի կին: Հազիւ մի տարվայ պսակված, երջանկութեան մէջ լողացող: Այցելութիւններ, երեկոյթներ, թատրօն, գուարճութիւններ կլանում են կարծես նրա ամբողջ օրերը: Նա իր մնացած ժամանակը նուիրում է հանգստութեանը հիանալի, յարմար մի բնակարանում, որ լի է մաքուր, տաք օդով և զեղուն արևաշատ լոյսով:

Սակայն յիրաւի որ մարդու բաղդը մշտապէս չէ լինում: Մի օր յանկարծ ձախ կողքի ցաւը այնքան սաստկանում է, որ նա ստիպւած է լինում անկողին մտնել: Հրաւիրւած բժիշկները գտնում են սերունդների յարատեւութիւնը պահպանող գործարանների տուբերկուլօզ: Ուրեմն ընդ միշտ կորած է մայրութեան յոյսը, կեանքի հրապոյրը:

Անցնենք այժմ այն 14—15 տարեկան պատանու: Մի օր նա սկսում է գանգատուել ծնկան ցաւերից: Մի քանի ժամանակ անցած՝ նրա ազդրի խաղը այլևս չէ կարողանում գործել. պատանին սկսում է կաղալ: Այս էլ երկար չէ տևում. նա ստիպւած է լինում անկողին ընկնել, ուր և մնում է երկար ամիսներ, մինչև որ նրան կանգամանատեն:

Այս պատանու ցաւը անուանւում է տուբերկուլօզային կօքսալգիա (իւանջուղ). Կօխի բացիլը թափանցել է նրա ոտի վերին յօդը:

Նայեցէք այս 18 տարեկան գեղանի կոյսին: Սրա ծունկը անսպասելի կերպով, գաղտագողի սկսել է ուռչել: Այս ուռուցքից կարելի է լինում հանել հեղուկի մի փոքր քանակութիւն. հետազօտութիւնը երևան է հանում նրանում Կօխի բացիլներ: Այս խեղճ աղջիկը տանջւում է այսպէս անուանւած սպիտակ ուռուցքով, ծնկան տուբերկուլօզային ուռուցքով:

Իսկ այն երեխաները, աղայ թէ աղջիկ, 7-ից մինչև 12 տարեկան, որ կորաքամակ են մնում ամբողջ իրանց կեանքում: Այս էլ հետևանք է Պօտտի հիւանդութիւն կոչւած ցաւի, ուրիշ խօսքերով՝ ողնաշարի ոսկորների տուբերկուլօզի:

Ո՞վ չէ տեսել այնպիսի մարդիկ, որոնց երեսի գանազան մասերի վրա, քթի վերևը կամ թշերի վրա, լինում են կարմիր բծեր՝ կեղևներով ծածկւած: Այս բծերը երբեմն մեծանում են մի թշից անցնելով միւսը, և յաւիտեան հոգսի ու մտաւանջութեան առարկայ

դառնում իրանց խեղճ տիրոջ համար: Սրա պատճառն էլ տուբերկուլօզն է: Այդ բծերը անուանւում են գայլուկ (գայլախոց, լիւպուս):

Իսկ այն մարդիկ, որոնք տարիներից ի վեր գանգատւում են իրանց առողջութիւնից և միշտ ցոյց են տալիս կրծքի մէջ տեղը որպէս խանգարման կենտրոն: Երբեմն նրանք նեղւում են մի տեսակ անձկութիւնից, որ կոկորդի վերին է գագացւում և որը առաջ է բերում մի տեսակ ջերմութիւն, որ հարուածում է ամբողջ դէմքը: Նրանց դէմքը այդպիսի բօպէներին կարմրագոյն է դառնում: Այդպիսի հիւանդները դժուարութիւնով են շնչում, և նրանց սիրտը շատ ուժգին է բաբախում: Սրա պատճառը պէտք է վերադրել նրանց կրծքի միջի ուռած խուլերին, որոնք Կօխի բացիլներով լեփ լեցուն են: Այս տեսակ ուռուցքները լինում են ի վերջոյ մահաբեր:

Բերեմ արդեօք օրինակներ տուբերկուլօզային բորբոքումների, որոնք լինում են երիկամուկների, աչքերի, կոկորդի մէջ և այլն:

Հերիք է ասել, որ մեր կազմուածքի ամեն մի գործարան, ամեն մի օրգան կարող է վարակւել տուբերկուլօզով:

Ուրեմն պարզ է, որ տուբերկուլօզը, մեր կազմուածքի մէջ մտնելով, իր գործունէութեան համար չէ ընտրում որևէ մի սիրած օրգան. ոչ. նրա համար բաւական է ընկնել մի որևէ օրգանի մէջ, այնուհետև նա արդէն աշխատում է աւշատար անօթների և արեսն երակների միջոցով գրաւել մարմնի ամբողջ շինուածքը:

Բացի շնչառութիւնից՝ տուբերկուլօզի բացիլներով վարակւել կարելի է և ուրիշ ճանապարհներով, հէնց մեր աղիքների միջոցով:

Տուբերկուլօզ պարունակող նիւթը կարող է ընկնել մարդու ստամոքսի մէջ, եթէ կերակուրը ինքն արդէն դերծ չէ տուբերկուլօզի բացիլներից, կամ եթէ կերակրին դրսից են խառնւում այդ բացիլները: Իսկ

8324-56.



դրսից ամեն մի կենսական միջերը, ամեն մի ուտելիք կարող է վարակվել տուբերկուլոզի բացիլներով՝ լինի այդ վարակումը այն մարդկանց միջոցով, որոնք պատ-
րաստել են այդ ուտելիքները և որոնց ձեռքերի վրա կարող է գտնվել տուբերկուլոզի նիւթը, լինի նա ճանձերի կամ փոշու միջոցով:

Որեւէ թոքախտաւոր ապրանքավաճառ, որ խորիս է արտադրում և այդ խորիսի մասնիկներէից կարող է ունենալ իր ձեռքերի վրա, չը նայած նոյնիսկ գոր-
ծադրած մաքրութեանը, ինչ կասկած՝ շատ հեշտու-
թեամբ պատճառ կը դառնայ ուրիշներին, իր հետ գործ, շփումն ունեցողներին, վարակելու հէնց իր ծա-
խած ապրանքի կամ միջերէի միջոցով: Յամենայն դէպս դրականապէս ապացուցված է, որ ամենալաւ կերա-
կուրն իսկ կարող է տուբերկուլոզի բացիլներով վա-
րակվել, եթէ նրա պատրաստողները տուբերկուլոզից
զերծ չեն:

Այս ասածներս վերաբերում են և մսին, և պտուղ-
ներին և խմիչքներին:

Սակայն կերակուրը կարող է պատրաստվելուց
յետոյ էլ վարակվել:

Շս ասացի, որ մարդը կարող է ուտելեղէնը վա-
րակել: Նոյնը կարող են անել և մանր միջատները և
ճանձերը: Փորձերը ցոյց են տուել, որ ճանձերը իրանց
կնճիթների և թաթիկների վրա կարող են մի տեղից
միւս տեղ փոխադրել տուբերկուլոզային խորիսը բա-
ւական մեծ քանակութեամբ, օրինակ՝ թքամաններից
կամ ուրիշ տեղերից:

Ուր այդպիսի ճանձեր նստում են, այնտեղ էլ
գտնվում են յետոյ տուբերկուլոզի բացիլներ:

Ճանձերը, մեղունները, բզեզները, սրանք բոլորն
էլ սննեակներից փոխադրում են թոքախտաւորի խոր-
իսի մասնիկներ և, ինչպէս միանգամայն դրականապէս
ապացուցված է, վտանգաւոր են հէնց նրա համար,

որ նրանք նստում են միջերէի վրա (հաց, միս, շա-
քար) և սրանց վրա էլ սերմանում են տուբերկուլոզի
թոյնը: Այսպիսի միջերէի թւումը կաթը իր յատուկ և
գլխաւոր տեղն ունի: Նա կարող է վարակման մի
աղբիւր դառնալ նաև կթողի կամ ծախողի միջոցով.
բայց նա ստանում է և մի առանձին ահազին նշանա-
կութիւն, եթէ չը մոռանանք, որ կովերն էլ շատ յա-
ճախ հիւանդանում են տուբերկուլոզով, այսպէս ան-
ուանված մարգարտային հիւանդութիւնով:

Եթէ կովի ծիծը տուբերկուլոզով վարակված է
կամ ինքը կովը ընդհանուր տուբերկուլոզով է բռ-
նրված, նրա կաթը կարող է պարունակել իր մէջ Կո-
խի բացիլներ: Այս պատճառով էլ մարգարտային հի-
ւանդութիւնով բռնված կովի հում կաթը հեշտու-
թեամբ է վարակում մարդուն տուբերկուլոզով:

Թոքախտաւոր մայրերը և ծծմայրերն անկասկած
կարող են ուղղակի տուբերկուլոզով վարակել ծծկեր
երեխաներին իրանց կաթով, որովհետեւ այդ կաթի մէջ
գտնվում են բացիլներ:

Մարգարտային հիւանդութիւնով վարակված կո-
վերի միսն էլ կարող է վարակիչ լինել, թէև այստեղ
պէտք է յիշատակել, որ կերակուր պատրաստելու
եղանակը խոշոր չափով նուազեցնում է վարակման
հնարաւորութիւնը. առհասարակ տապակելը կամ եփելը
ոչնչացնում է, սպանում է բացիլները:

Ուրիշ կենդանիների միսն էլ կարող է մարդուն
տուբերկուլոզով վարակել, եթէ այս հիւանդութիւնով
բռնված լինեն դրանք, օրինակ՝ հաւը, նապաստակը,
ճագարը, խոզը և այծը: Հաւը շատ յաճախ է հիւսն-
դանում տուբերկուլոզով:

Վարակիչ թոյնը կաշուի կամ թաղանթի գանա-
զան տեղերով կարող է ներս ընկնել: Այսպէս օրինակ՝
համըրը կարող է փոխադրել տուբերկուլոզը:

III

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕՁԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եթէ տուբերկուլօզը կարող է հիւանդից անցնել առողջին, ուրեմն և հիւանդներէ սերտ յարաբերութիւնը առողջներէ հետ՝ այս վերջինների համար շատ վտանգաւոր է դառնում: Նրանք, որ թոքախտաւորներէ հետ միկնոյն սենեակումն են քնում, կամ նրանց են ծառայում, իրանք էլ հիւանդանում են թոքախտով: Ընտանեկան կեանքից շատ օրինակներ ցոյց են տալիս, որ առողջ ամուսինը ապրելով, կենակցելով իր թոքախտաւոր կնոջ հետ՝ վերջ ի վերջոյ ինքն էլ է հիւանդանում թոքախտով, և ընդհակառակը:

Հէնց այսպէս էլ ծնողները կարող են վարակել իրանց երեխաներին, և երեխաները՝ ծնողներին:

Պէտք է յիշել, որ թոքախտաւորի ապրած վայրերում վարակիչ թոյնը կարող է երկար ժամանակ իր գոյութիւնը պահել: Եթէ մի բնակարանում, ուր առաջ ապրել է թոքախտաւոր հիւանդը, մննելու լինի մի առողջ ընտանիք, տուբերկուլօզը կարող է նպաստաւոր հանգամանքով և այս ընտանիքում երևալ:

Վարակիչ կարող է դառնալ և թոքախտաւորի հագուստեղէնը: Առողջ դերձակները, որ աշխատանքի նպատակով ժամանակաւորապէս, դիցուք ամառը, տեղափոխվել են գլխաւորապէս թոքախտաւորների յաճախած բուժավայրերը, ուր և պարապելիս են եղել հագուստեղէնի նորոգութեամբ, յաճախ իրանք էլ թոքախտով վարակված են տուն վերադարձել:

Սակայն չը պէտք է մոռանալ, որ շատ և շատ բազմաթիւ մարդիկ մնում են դերձ, ազատ տուբեր-

կուլօզից, չը նայած որ նրանք համարեա միշտ մնում են վարակման ենթակայ. օրինակ՝ բժիշկները, հիւանդանոցների ծառաները, հիւանդի ընտանիքի միւս անդամները:

Սրա պատճառն այն է, որ տուբերկուլօզի զարգացման համար բացի վերը յիշածս պայմաններից՝ հարկաւոր են և շատ ուրիշներ, որոնց ամբողջութիւնը անուանվում է հիւանդանալու հակամէտութիւն, տրամադրութիւն:

Հակամէտութիւնը այն գլխաւոր հոդն է, որ առհասարակ դեր է խաղում վարակիչ հիւանդութիւնների մէջ:

Ամեն մի անհատ առանձին վերցրած, որին որեւէ հիւանդութիւն ստանալու վտանգ է սպառնում, նման չէ բոլոր մնացած մարդկանց:

Չը նայած որ վարակիչ նիւթի փոսակարութեան ազդեցութիւնը նոյնն է, այսու ամենայնիւ հիւանդանում է միայն տրամադիր մասը:

Ներքին տրամադրութիւնը կարող է լինել ժառանգական, ընածին կամ ստացական:

Ինչ վերաբերում է ժառանգական հիւանդոտ, թոյլ կազմուածքին, պէտք է շեշտել, որ բարակացաւ և ժառանգականութիւնը միշտ իրարից անբաժան են:

Որ շատ ընտանիքներում թոքախտը ժառանգաբար է փոխանցում, հազիւ թէ կասկածել կարելի լինի:

Մենք շատ յաճախ տեսնում ենք, որ միկնոյն ընտանիքի շատ անդամները՝ մինը միւսի ետեւից՝ զոհ են գնում բարակացաւին, եթէ ծնողները—կամ միայն հայրը կամ մայրը—հիւանդ են եղել կամ մահացել են բարակացաւից:

Տեղը չէ այստեղ բացատրելու, թէ այժմս գիտութիւնը ինչպէս է ընդունում բարակացաւի ժառանգաբար փոխանցումը:

Բարակացաւի ստացական տրամադրութիւնը կարող է երեւան գալ բոլոր այն պատճառներով, որոնք մարմնի շինուածքը նուազեցնում են կամ որոնց շնորհիւ այդ մարմնակազմի հիւսուածքը կորցնում է իր դիմացկունութիւնը:

Մանկական մատաղ հասակում անյարմար սնունդը և կենցաղը, ֆիզիքական և մտաւոր յոգնածութիւնը, քրօնիքական հիւանդութիւնները, մանաւանդ այնպիսիները, որոնց հետեանքը շնչառական գործարանների պէս-պէս բորբոքումներն են լինում, այս և սրա նման երևոյթները համարվում են կազմուածքի շահած թուլութեան գլխաւոր պատճառները: Իսկ սակաւարիւնութիւնը, քրօնիքական առատ փոտումները, ծանր հիւանդութիւններից դանդաղաշարժ ապաքինումը, ստամոքսի և աղիքների շատ զարգացած քրօնիքական բորբոքումները, ստամոքսի քրօնիքական խոցերը, յաճախ և իրար հետևող յղիութիւնները, մանաւանդ երբ երկար էլ կերակրում են ծծկեր երեխային, շաքարախտը—այս բոլորը շատ նպաստում է, որ տուբերկուլօզի բացիւները թափանցեն մարմնը:

Մաքուր օդից զուրկ բնակարաններում, խոնավ և մռայլ ու մութ ներքնայարկերում միասին կուտակված բնակութիւնը նպաստաւոր հող է դառնում տուբերկուլօզի բացիւների համար, մանաւանդ որ այդպիսի խեղդված ու ապականված օդ ունեցող բնակարանների և ներքնայարկերի բնակիչները շատ անբաւարար և վատ էլ սնունդ են ստանում:

Որպիսի էական նշանակութիւն ունեն մրսելը և զանազան բրօնխիտներն ու բորբոքումները, նոյնպիսի նշանակութիւն պէտք է վերագրել և փոշոտ ու փշացած օդի մէջ մնալուն:

Փոշի ներս շնչելուց առաջացած հիւանդութիւնները թոքախտի հրաւիրակներն են:

Ածուխի, մետաղի և քարի փոշին, ինչպէս և կեն-

դանինների և կամ բոյսերի մնացորդներ պարունակող փոշին առաջացնում է թէ շնչափողերի և թէ թոքերի հիւսուածքի բորբոքումն:

Սոսկ արհեստից առաջացած հիւանդութիւնների շնորհիւ բանւորների մի քանի խմբակներ շատ յաճախ զոհ են դնում թոքախտին: Օրինակ՝ այն բանւորները, որոնք ստիպված են մեծ քանակութեամբ շնչելու փայտի կամ քարածխի, մրի կամ գրաֆիտի փոշին, ապակեգործները, թանգագին քարերի յղկիչները, քարտաշները, քանդակագործները, յաղճապակու գործարանների բանւորները, բրուանները, խարտոց շինողները, երկաթագործները, հայելիների կոկիչները, սրողները (միաժամանակ շնչում են և քարի, և երկաթի փոշին), խաղախորդները, թամբագործներն և խոզանակագործները, որ ներշնչում են կենդանական փոշին:

Ծխախոտի, թղթի, փայտի, ալիւրի և կտաւահատի փոշին էլ առաջացնում է թոքերի հիւանդութիւններ, որոնք և նպաստում են տուբերկուլօզի վարակմանը:

Մեզ շրջապատող օդն էլ ունի իր դերը թոքախտի երեւալու և տարածման մէջ: Ինչ վերաբերում է կլիմային, պէտք է ասած, որ աշխարհագրական ամեն դօտինների վրա կան տեղեր՝ ազատ բարակացաւից, բայց և կարելի է ասել, որ չը կայ մի կլիմայական դօտի, ուր բարակացաւ չը լինի:

Ընդհանուր առմամբ խոնավ օդը բարակացաւի տրամադրութեանը նպաստաւոր է, մանաւանդ երբ խոնավ կլիմային միանում է օդի մշտական ջերմութիւն և եղանակի յանկարծական սուր փոփոխութիւններ: Չոր կլիման տաքութեան սուր և բարձր աստիճանների ժամանակն իսկ քիչ է նպաստում տուբերկուլօզի տարածմանը:

Օդի ջերմութեան միապաղաղ ստորին աստիճանը աւելի սակաւ է նպաստաւոր բարակացաւի համար, քան թէ միապաղաղ բարձր աստիճանը:

Որոշ քամիները ամենուրեք մնասական են, որովհետեւ նրանք շատ հեշտութեամբ շնչառական գործարանների հիւանդութիւններ են առաջացնում, որոնք և տուբերկուլոզի բացիլների համար հող են պարարտացնում կամ արագ աճեցնում են եղած տուբերկուլոզը:

Բարձր գետինը, բարձրագիր տեղը անկասկած ունի նաև իր կարեւոր նշանակութիւնը:

Թոքախտաւորների թիւը պակասում է զարմանալի կերպով, երբ գետնի բարձրութիւնը ծովի մակերևոյթից անցնում է որոշ չափով:

Ընդհանրապէս ընդունված է, որ ծովի մակերևոյթից առ նուազը 500 մետր բարձրութիւն ունեցող տեղերում թոքախտը շատ սակաւ է երևում, կամ բոլորովին չէ երևում:

Գետնի բաղադրութիւնն էլ ազդում է թոքախտի երևալու կամ զարգանալու վրա: Այս հիւանդութիւնը աւելի յաճախ երևում է այն տեղերում, ուր գետինը խոնաւ է, քան թէ չոր գետին ունեցող տեղերում:

Ապացուցված է, որ Անգլիայի շատ քաղաքներում, ուր ջրմուղների շնորհիւ գետնահողը յայտնի չափով առաջվանից աւելի ցամաքած է, բարակացաւորների թիւը նշմարելի կերպով նուազել է. նմանապէս և ջուր ձծող չոր գետնի վրա հաստատված բնակչութեան մէջ բարակացաւոր աւելի սակաւ է երևում, քան այնտեղ, ուր բնակչութիւնը կաւային շերտի վրա է ապրում:

Ծովի մօտակայութիւնը նպաստում է բարակացաւոր համեմատական սակաւութեանը:

Հասակը էական նշանակութիւն ունի բարակացաւոր շատ ու քիչ հիւանդանալու վրա: Չահէլ ծաղիկ հասակում բարակացաւորից աւելի շատ մարդ է մահանում, քան աւելի մեծ հասակում:

Հասարակական դիրքը թոքախտի երևալու մէջ

այնքան դեր է խաղում, ինչքան որ աղքատիկ բնակչութեան մէջ առհասարակ համախմբված են բոլոր այն մնասաբեր պայմանները, որոնք ծնեցնում են թոքերի տուբերկուլոզի արամադրութիւնը և աւելի դիւրացնում անմիջական վարակումը:

Ընդհանուր առմամբ պէտք է յիշատակել, որ աղքատ բնակչութեան մէջ բարակացաւոր սաղմը զարգանում է ստացական հողի վրա, մինչդեռ աւելի ապահովված դասակարգի մասին խօսելիս՝ պէտք է աչքի առաջ ունենալ նրա կազմուածքի ժառանգական թուլութիւնը:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Քանի որ տուբերկուլօզի վարակիչ լինելը դրանապէս տալացուցված է, ուստի և նրա բժշկութիւնը պէտք է հիմնովի նախազգուշական միջոցների վրա:

Այդ միջոցները պէտք է բաւարարեն երկու պահանջ. առաջին՝ նրանք պէտք է տուբերկուլօզի տարածման առաջն առնեն և ոչնչացնեն տուբերկուլօզի բացիւնները, երկրորդ՝ նրանք պէտք է ամեն մի առանձին անհատի, մանաւանդ եթէ սա տուբերկուլօզին ենթակայ է, պահպանեն տուբերկուլօզի թոյնի իսկական վարակումից:

Այս երկու պայմանները կատարելու համար հարկաւոր է ձեռնարկել մի շարք միջոցներ, որոնց ամբողջութիւնը ամփոփում է հասարակական եւ անհատական առողջապահութիւնը:

Վերն ասացի, որ տուբերկուլօզի թոյնը տարածվում է գլխաւորապէս բարակացաւորների խորխով:

Հետեւեալ բարակացաւորը իր շրջապատի համար միշտ վտանգաւոր է իր խորխով: Այս պատճառով էլ խորխի վտանգաւորութիւնը պէտք է չէզոքացնել: Պէտք է շեշտել, որ տուբերկուլօզի խորխով վարակվելու անը մեծանում է, երբ այդ խորխը չորանում է և խառնվում օդին:

Բոլոր բարակացաւորները պէտք է անպայման սովորեն և ընտելանան թքամանների մէջը թքել: Պէտք է ստիպելու չափ զգուշացնել, որ երբեք չը թքեն յատակի վրա, կամ թաշկինակի մէջ: Թաշկինակները,

մահճակալի և հազնելու սպիտակեղէնը, ամանեղէնը պէտք է հիմնովին եփել, թէկուզ հիւանդը ուշի ուշով ինքն իրան հետեւելու լինի և աշխատելու լինի ազատ պահել իրան խորխի ապականութիւնից:

Յատակները, կոշտ առարկաները և պատերը այն սենեակի, ուր ապրում է բարակացաւորը, պէտք է շատ յաճախ լուացվեն և պաստառները (եթէ կան) պէտք է հացի փափուկ միջուկով սրբվեն:

Բայց ամենից նպատակայարմարն է պաստառները հեռացնել և պատերը ծածկել իւղաներկով:

Բացի բարակացաւորների խորխից և արտաթորութիւններից, տուբերկուլօզի սաղմը տարածում են նաև կենսական մթերքները:

Առաջին տեղը դրանց մէջ բռնում է կովի կաթը, որովհետեւ եղջիւրաւոր կենդանիները շատ յաճախ հիւանդանում են տուբերկուլօզով. իսկ կաթը չէ՞ որ կենսական ամենաանհրաժեշտ մթերքներից մէկն է:

Տուբերկուլօզի կամ մարգարտային հիւանդութեան տեսակէտից կտակածելի կովը պէտք է անմիջապէս հեռացվի կաթնատնտեսութիւնից, որովհետեւ նա վարակիչ է ուրիշ կովերի համար, իսկ այդպիսի հիւանդ կովերի կաթը ոչ մի դէպքում չը պէտք է գործածել, այլ պէտք է ոչնչացնել այն, թէկուզ կովի ծիծը արտաբուստ բոլորովին առողջ երևայ:

Բոլորովին առողջ համարվող կովերի կաթը ամենանպատակայարմարն է նվաճ գործածել, որովհետեւ կովերի մարգարտային հիւանդութիւնը միայն զօրացած ժամանակաշրջաններում է իմացվում և յաճախ էլ՝ միայն կովը մորթելուց յետոյ:

Հում, չեփած կաթը աւելի լաւ է բոլորովին չը գործածել:

Մարգարտային հիւանդութեամբ բռնված եղջիւրաւոր կենդանիների միտը շատ վտանգաւոր է տուբերկուլօզը տարածելու տեսակէտից: Այդպիսի միտը

ամենից լաւն է ոչնչացնել: Նմանապէս հարկաւոր է ոչնչացնել տուբերկուօգով հիւանդ հաւերին:

Նրանք, որոնք հիւանդ են թոքախտով, կամ տուբերկուօգի մի այլ տեսակով, իրաւունք չը պէտք է ունենան կենսական միջոցներ ծախելու, ոչ էլ պատրաստելու թարմ կամ պահեստի ուտելիքներ, ոչ էլ հաղուստեղէն:

Ինչ վերաբերում է գործադրվելիք մասնաւոր միջոցներին, բժշկութեան նպատակը նրանումն է, որ ամեն ոք խոյս տայ անմիջական վարակման վտանգից:

Վարակումը գլխաւորապէս պատահում է բարակացաւորների հետ յարաբերութիւն ունենալուց: Ուստի պէտք է ստիպելու չափ զգուշացնել առողջ մարդուն, որ տուբերկուօգով հիւանդի հետ չապրի, չը կենակցի:

Բարակացաւորները պէտք է առանձնացած լինեն:

Պէտք է խուսափել բարակացաւորների ընտանեկան և բարեկամական սերտ կապերից:

Շրթունքների համբոյրը կարող է թոյն դառնալ:

Սերտ կենակցութիւնը, միեւնոյն անկողնի մէջ քնելը այնպիսի պարագաներ են, որոնք բողբոլում են բարակացաւորների ամուսնութեան դէմ:

Այն բնակարանը, ուր ապրել կամ մեռել է բարակացաւորը, չը պէտք է վարձել, մինչև որ նա հիւանդի չը մաքրվի, չախտահանվի իր յատակով, պատերով և այլն:

Ամեն մի մարդ կարող է հիւանդանալ տուբերկուօգով. այս պատճառով էլ ամեն ոք պարտաւոր է խուսափել այն բոլորից, ինչ որ կարող է փաստաբեր ազդել մասնաւորապէս թոքերի վրա: Չափաւոր կեանք, ոչ մի չափազանցութիւն, լաւ սնունդ, բաւարար քուն, լոյս, արևոտ և չոր բնակարան. եթէ սրանց վրա էլ աւելացնենք, որ պէտք է խուսափել յոգնածութիւնից,—

թւած կը լինենք բոլոր այն միջոցները, որոնք մարդուն առողջապահական ներդաշնակ պայմանների մէջ են պահում:

Մի քանի արհեստներ փաստաւոր ազդեցութիւն են ունենում մասնաւորապէս թոքերի վրա և դրանով թոքախտի տրամադրութիւն են ստեղծում: Դրանք գլխաւորապէս այն արհեստներն են, որ փոշի են շնչել տալիս:

Մետաղական, քարէ, կենդանական և բուսական փոշին՝ թոքախտի գլխաւոր պատճառն է, որ և անհամար զոհեր է տանում խարտոց շինողներից, երկաթէ և պողպատէ առարկաների արծնողներից, քարտաշներից և առհասարակ նրանցից, որոնք կենդանիների մազից և բամբակից բաներ են շինում:

Այս արհեստները պահանջում են անպայման ընդարձակ շինութիւններ բանւորների համար, օդը փոխելու լաւ յարմարութիւններով հանդերձ:

Բացի սրանից՝ բանւորները պէտք է բաւական ազատ ժամանակ ունենան, որպէսզի մաքուր և ազատ օդում կարողանան մաքրել իրանց թոքերը:

Այս յիշածս նախազգուշական միջոցները աւելի մեծ թափով անհրաժեշտ են նրանց համար, որոնք սերվել են թոքախտաւոր ծնողներից, կամ՝ առհասարակ տուբերկուօգի տրամադրութիւն ունեն:

Առանձնապէս տուբերկուօգի վարակմանը տրամադիր պէտք է համարել նմանապէս այն երեխաներին, որոնք ծնվել են այնպիսի ծնողներից, որ յղութեան ժամանակը թուլացած են եղած՝ կամ ծեր հասակից, կամ հիւժող հիւանդութիւնից և կամ թէ վատ մեռնողից:

Լաւ սննդարար և խառն կերակուր—ահա այն կարևորը, որով հնար է երեխայի մարմնակազմին մատակարարել ամուր և առողջ զարգացում:

Առողջութիւնը պահպանելու և զօրացնելու հա-

մար հարկաւոր է նմանապէս մաքուր և թարմ օդ։ Մարմինը ամրապնդելը և նպատակայարմար մարմնամաքողութիւնը կը լրացնեն երեխաների առողջ մարմնակազմի զարգացումը։

Դպրոցական առողջապահութեան մասին ուրիշ անգամ կը խօսենք *)։

*) Յիշեմ այստեղ միայն հետեւեալը.

Դպրոցական առողջապահութիւնը առաջ միայն մի նպատակ ունէր՝ այն է աշակերտներին զերծ պահել վարակիչ հիւանդութիւններից. իսկ այսօր նա դրանով չէ բաւականանում. նա իր սահմանները լայնացրել ու մեծացրել է և հաւակնութիւն ունէ մասնակցել մանկան ֆիզիքական, մտաւոր և բարոյական դաստիարակութեանը։ Ուրեմն դպրոցական առողջապահութիւնը հիւանդութիւնների աշխարհից մտնում է մանկավարժութեան սահմանները։

Ո՞րն է արդի դպրոցի նպատակը։

Զարգացնել և մեծացնել ինչքան հնարաւոր է անհատի սօցիալական (հասարակական) արժէքը։

Ի՞նչով, ի՞նչ միջոցներով։

Խելացիօրէն մշակելով, զարգացնելով, կրթելով մանկան ֆիզիքական, մտաւոր և բարոյական ընդունակութիւնները։

Իսկ առողջապահութեան մասնակցութիւնը այս գործումը։

Նա՝ առողջապահութիւնը, բարձրաբարբառ պահանջում է դպրոցի համար այն բոլորը, ինչ վերաբերում է աշակերտների առողջութեանը, ոչ թէ միայն և միայն նրանց պահպանելու համար վարակիչ հիւանդութիւններից, ոչ. դա շատ նեղ պահանջ և նպատակ կը լինէր մեր այսօրուայ առողջապահութեան համար. նա աւելի լայն մտքով է իւր գործին վերաբերվում և այս պատճառով էլ ուզում է նպաստել աշակերտների ամփոփ ֆիզիքական կրթութեանը և յարմարեցնել մտաւոր զարգացումը ամեն միւս ֆիզիքական իսկական կարողութեանը և ոյժերին։

Զարմանալի չէ, ուրեմն, որ դպրոցական առողջապահութիւնը դարձել է այսօր Եւրօպայում կրթութեան և բնախօսական մանկավարժութեան հիմնաքարը։

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՐՀԵՍՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Տուբերկուլօզի վտանգից նախազգուշացնող միջոցների թւում պէտք է դնել հոգատար խուսափումը բոլոր այն փասակար պատճառներից, որոնք առաջ են բերում շնչափողի և կոկորդի բորբոքումը։

Բարակացաւի տրամադիր մարդկանց անպայման արգելվում է շատ վազելը, երգելը, բղաւելը, պարելը, շատ տաք ու պաղ խմիչքներ խմելը, ցուրտ և խոնաւ սենեակներում և սառցատներում մնալը, նաև կանգնելը միջանցիկ քամու դիմաց, կամ ծխոտ օդում, ոգեւից խմիչքների չափազանց գործածելը և շատ ծխելը։

Նուազ մարդը պէտք է զգուշանայ օդի ջերմութեան ամեն մի շուտափոյթ և յանկարծակի փոփոխումից։

Նուազ կամ ժառանգական հիւանդ տրամադրութիւն ունեցողների համար մասնագիտութեան ընտրութիւնը արժանի է մեծ ուշադրութեան։ Աւելորդ է ասել, որ ընդմիշտ պէտք է թողնել բոլոր այն մասնագիտութիւնները, որոնք այսպէս թէ այնպէս կապ ունեն փոշու հետ։ Անպէտք են այս տեսակէտից նաև բոլոր այն զբաղմունքները, որոնք կատարվում են փակ սենեակի մէջ և մարմնի կուսցած դրութիւնով, օրինակ՝ գրագրի պաշտօնը, դերձակի, կօշկակարի արհեստը։ Զուլհակների համար մարմնի կուսցած դրութիւնը փոշի ներշնչելու հետ միասին վերցրած՝ երկպատիկ վտանգ է սպառնում։

Թոյլ կուրծք ունեցողները երբէք չը պէտք է դառ-

նան փողահար, մոռնեալիկ, կամ յատակ մաքրող: Այդ-
պիսիներէ համար աւելի յարմար են թեթեւ զբաղմունք-
ներ զիւղատնտեսութեան կամ անտառապահութեան
մէջ, օրինակ՝ կառավարիչ, վերակացու և այլեպէս:

Եթէ լաւ անունով աջողովում է զօրեղացիներ ու
ամրացիներ մարմնակազմի՝ թոքերի տուբերկուլոզի դէմ
գլխացկունութիւնը, հարկ է ուրեմն հիւանդներին դնել
այնպիսի պայմաններէ մէջ, որոնք արդելք լինեն հի-
ւանդութեան տարածմանը թոքերի մէջ:

Հիւանդ թոքը պէտք է պաշտպանել նորանոր ձա-
խորդ պայմանների ամեն մի ազդեցութիւնից: Սրա
համար թոքերը պէտք է ստանան ամենալաւ և ամե-
նաառողջարար օդ, և մարմնի շինուածքը ամրապնդվի
եղանակի անխուսափելի փոփոխութիւնների դէմ: Այս-
տեղ ինքը հիւանդը շատ բան կարող է անել իր առող-
ջութեան համար, որովհետեւ ուր էլ որ նա ապրի, պար-
տաւոր է վարել խոհական և զգոյշ կեանք: Ամենից
առաջ նա պէտք է ձեռք քաշէ այն բոլորից, ինչ որ
անբաժան է անկանօն կեանք վարելուց, օրինակ՝ ամե-
նայն տեսակի հասարակական տեղերից, ուր միշտ
մարդկանց մեծ կուտակումն է լինում:

Բարակացաւորը պարտաւոր է վաղ տուն վերա-
դառնալ. նա չը պէտք է իր տնից դուրս մնայ ուշ
երեկոն, ոչ էլ գիշերը: Վատ և սաստիկ ցուրտ եղա-
նակին նա պէտք է տանը մնայ, իսկ օրվայ քամիներ-
ից ազատ և տաք ժամերին նա պէտք է ազատ օդում
զբօսնէ:

Կլիմայի անպատեհութիւնից նա իրան պէտք է
պաշտպանէ յարմար հագուստով՝ տարվայ եղանակին
համաձայն՝ և իր կաշին ամրացնելով պաղ ջրի շփում-
ներով:

Յամենայն դէպս շատ իրաւացի են նրանք, որոնք
կլիմայական բուժատեղերին աւելի մեծ կարեւորու-
թիւն և նշանակութիւն են տալիս, քան թէ թոքախ-

տի բուժմանը դեղերով: Սակայն չը պէտք է մոռա-
նալ, որ կլիմայական բուժարանները աւելի լաւ օդ-
նում են այն ժամանակ միայն, երբ հիւանդութիւնը
զանգվում է իր սկզբնական շրջաններում, և որ նրանք
մատչելի են շատ սակաւ ընտրեալներին միայն—եթէ
համեմատելու լինենք սրանց տուբերկուլոզ ունեցող-
ների ահագին թւի հետ—ինչ-ինչ պատճառներով,
որոնց մասին կը խօսվի յօդուածիս վերջումը:

* *

Ահա, պարոններ, համառօտ նկարագրութեանս մէջ
ձեզ ներկայացվեցին մօտաւորապէս գլխաւոր դիտե-
լիքները տուբերկուլոզի և այն միջոցների մասին, որոնց
շնորհիւ հնարաւոր եղաւ սանձահարել ու զսպել մարդ-
կութեան այդ մինչև օրս անհաշտ թշնամուն:

Ամենագլխաւոր, նաև մեն միակ անյաղթ գէնքը,
որ ունենք մասնաւորապէս տուբերկուլոզի և առհա-
սարակ բոլոր վարակիչ հիւանդութիւնների դէմ մա-
քառելու համար,—դա առողջապահութիւնն է: Մենք
տեսնում ենք, թէ այն երկիրները, որոնք հիւանալի
հասկացել ու ըմբռնել են ժողովրդական առողջու-
թիւնը ապահովող առողջապահութեան մեծ և հզօր
նշանակութիւնը, նրանք, այդ բաղդաւոր երկիրները,
տարէ-ցտարի աւելի և աւելի սակաւաթիւ զոհեր են
տալիս վարակիչ հիւանդութիւններին: Անգլիան 50
տարի սրանից առաջ բոլոր մահերի 50%-ը տուբեր-
կուլոզին էր տալիս, իսկ այսօր 5%-ն էլ չէ տալիս.
իսկ այդ նրան աջողվել է միայն եւ միայն առողջա-
պահութիւնը բազմակողմանի կերպով մօցնելով իր
ժողովրդի ընդհանրական և մասնաւոր կեանքի մէջ:

Սակայն կարելի է արդեօք երևակայել մի կլիմա,
որ աւելի բարեպատեհ և նպաստաւոր լինէր տուբեր-
կուլոզի զարգացման համար, քան Անգլիայի խոնաւ,

դաժան, մռայլ և արեւագուրկ կլիման. կարելի է արդեօք երեւակայել աւելի կուտակված ապրող մի ժողովուրդ, քան Լօնդօնի բնակչութիւնը, մի քաղաք, որի բնակչութեան թիւը համարեա համահաւասար է մեր ամբողջ Կովկասի բնակչութեանը: Բայց չէ՞ որ այնտեղ, Անգլիայում, առողջապահութիւնը իր բոլոր զէնքերով զինված է գործում:

Այո, առողջապահութեան իսկական նշանակութիւնը հէնց նրանումն է, որ այսօր Եւրօպան համարեա թէ չը գիտէ վարակիչ հիւանդութիւն, ուր մնաց համաճարակները, և ըստ պրօֆ. Մէշնիկովի աջող ասածի՝

«Շուտով եւրօպական համալսարանների բժշկական բաժինները ստիպված կը լինեն ուսանողների խմբեր ուղարկել Ռուսաստան՝ նրանց վարակիչ և համաճարակ հիւանդութիւնների հետ գործնականապէս ծանօթացնելու համար»:

*
* *

Հիմա տեսնենք, թէ ինչպէս է Եւրօպան մաքառում տուբերկուլօզի դէմ, և նրա երկար ժամանակների փորձը ի՞նչ միջոցների է նրան այսօր հասցրել այդ մաքառման այդքան աջող ելքի համար:

Սրանից յետոյ տեսնենք, թէ մեզ մօտ՝ Ռուսաստանում և մասնաւորապէս Կովկասում մինչև օրս ի՞նչ է արված տուբերկուլօզը ժողովրդական չարիքների թւից դուրս ձգելու համար, և այսուհետև ի՞նչ պիտի անվի, որպէսզի մնզնում էլ մաքառումը իսկական աջող արդիւնքներով պսակվի:

ԵՒՐՕՊԱՅԻ ԶԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Եւրօպայում տուբերկուլօզի դէմ մաքառելու համար զանազան միջոցներ են գործ դնում: Այնտեղ՝ թէ քաղաքներում, թէ գաւառներում ընկերութիւնների և մասնաւոր մարդկանց նախաձեռնութիւնը քաջարի կերպով նետվել է պատերազմի մէջ այս հասարակական պատուհասի դէմ:

Այս գործունէութիւնները առաջ են բերել առողջանոցներ—սանատորիաներ—զանազան ծովային, ցամաքային, կլիմայական և հանքաջրային վայրեր, ապաքինման ապաստարաններ և անդորրատներ (հանգըստութեան տներ):

Վերջին ժամանակներս հիմնվել են ամառվայ արձակուրդների գաղթավայրեր (կօլօնիաներ), նաև ժողովրդական և առհասարակ առողջապահական գաղթավայրեր թէ երեխաների և թէ հասակաւորների համար:

Հասակաւորների համար կան և այսպէս անուանված դիսպենսարներ, ժողովրդական առողջանոցներ, առանձնացման բուժարաններ, վերջապէս բանւորների համար այգիներ, հանգստանալու տներ և այլն:

Բացի այս բոլորից՝ գոյութիւն ունեն զանազան խմբեր, ընկերութիւններ, դաշնակցութիւններ, գործակցութիւններ, նուիրված փոքրիկ երեխաներին և հասակաւորներին:

Եւ այս բոլորը՝ ժողովրդական առողջապահութիւնը անշեղ ապահովող եւ հաստատուն պահպանող օրէնսդրութեան հովանու տակ:

Եւրօպական բոլոր հասարակութիւնները շատ լաւ են ըմբռնել, որ առողջապահութիւնն է մարդկութիւնը փրկում հիւանդութիւնների հետեանք պատուհասներէրց, և որ նա է միայն կարող սահմանել իսկական նօրմալ կենցաղավարութեան եղանակը:

Ուստի ամենից առաջ եւրօպական հասարակութիւնները առողջապահութեան դաստանդութիւնը պարտաւորեցուցիչ են դարձրել բոլոր տարրական, միջին և բարձր ուսումնարաններում:

Ուրեմն և զարմանալի չէ, որ այդ եւրօպական հասարակութիւնների ամեն մի անդամ, ամեն մի անհատ հէնց իր մանկութեան հասակից սկսում է սովորել առողջապահութիւնը, ընտելանալ նրան, սիրել, հպատակվել նրա առաջադրած կանօններին և այն իր կեանքի մէջն առնել և գործադրել:

Ի՞նչքան հեշտ պիտի լինի որևէ առողջապահութիւնը հասկացող և նրանից սպասվելիք արդիւնքը գնահատող այդպիսի հասարակութիւնների համար ի մի խմբվել ընդհանուրին վիստարեր որևէ հիւանդութեան, դիցուք մի տուբերկուլօզի դէմ՝ մաքառման գործը գլուխ բերելու համար:

Սակայն եւրօպական հասարակութիւնների բոլոր միացած ոյժերը շատ լաւ գիտէին, որ մի վարակիչ հիւանդութիւնով բռնված հիւանդին առողջացնելը դեռ չէ կարող համարվել այդ հիւանդութեան դէմ գործադրած մաքառման իսկական, բէալ, աջող արդիւնք, ոչ. գլխաւոր նպատակը նրանումն է, որ այդ վարակիչ հիւանդութիւնը ինքն իսպառ անհետանայ:

Այս տեսակէտը երկու օգտակար արդիւնք է տալիս: Մինը՝ վարակիչ հիւանդութեան ըզգմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրութիւնը, որը և ամենաանկաշառ և անսխալ կերպով ցոյց է տալիս և թելադրում գործադրելի միջոցների մասին: Միւսը՝ գործադրած միջոցների պիտանութեան և գործնականու-

թեան քննութիւնը, հիմունք ունենալով տարիներից կուտակված փորձը:

Արդ՝ տարիների մեզ ցոյց տուած փորձը իբրև մի անհերքելի ճշմարտութիւն, աքսիօմա, առաջ է բերում հետեւեալը. «Տուբերկուլօզը բժշկելու համար ամենագերագանց կլիման այն է, ուր հիւանդը ծնվել է, կամ երկար տարիներ ապրել»:

Սրա պէս մի ուրիշ ոչ պակաս կարևոր փորձ նմանապէս շատ երկար ժամանակից ի վեր հաւատարմացնում է, որ հիւանդի աջող բժշկութիւնը՝ բոլոր պայմանների հետ միասին՝ պահանջում է նաև, որ հիւանդի հոգեկան դրութիւնը լինի անդորր ու հանգիստ, նրանից հեռու լինեն զանազան մտատանջութիւններ, աօրեայ հոգսեր և սրանց նման հոգին և մարմինը միասին հալ ու մաշ անող, հիւժող շատ պարագաներ:

* * *

Լոյս, օդ, արև, մնունդ և առհասարակ առողջապահական զանազան միջոցներ—ահա սրանք են դարձել առողջանոցների հիմնաքարերը:

Ուրեմն առողջանոցը մի բժշկական հիմնարկութիւն է, առողջարար կլիմայական վայրում գտնվող, որ առատ լոյս և օդ ունի, ամեն կողմից զարգարված պայծառ արևի զեղեցիկ և կենսատու ճառագայթներով:

Այդպիսի հիմնարկութիւնները համարեա բոլորն էլ բնակավայրերից, մեծ-մեծ քաղաքներից հեռու են գտնվում, և այս հանգամանքը առողջանոցի դրական կողմերից մինը, էն էլ գլխաւորն է համարվում:

Առողջանոցի մէջ տուբերկուլօզի որևէ տեսակը ունեցող հիւանդները, նախապէս ամեն մի առողջանոցի համար առանձին սահմանված թւով, բժշկվում են իրանց ցաւից բուժեան ոյժերով, որոնց ամբողջութիւնը անուանվում է ֆիզիօթերապիա, այսինքն

բժշկութեան մեթոդների մի միաւորութիւն, որ գործադրում է ֆիզիքական գործօնները, այն է՝ լոյս, էլեքտրականութիւն, շարժում, օդ, ջուր, կլիմա, վայրի բարձրութիւն և այլն:

Ներօպայի առողջանոցների շատ մեծ բաժինը գտնվում է բնութեան ամենահրաշագեղ տեղերում:

Սակայն առողջանոցները ամեն մի տուբերկուլօզով հիւանդին չեն ընդունում: Լինելով որոշ սխտեմի հիմնարկութիւններ, նրանք կառավարվում են որոշ կանոնադրութիւններով և այս վերջինների որոշ յօդուածներին հպատակվում են դիմող հիւանդները, թէ ընդունվելու համար և թէ ընդունվելուց յետոյ՝ այնտեղ ապրելու և բժշկվելու համար:

Պէտք է ասենք, որ ընդհանուր առմամբ բոլոր առողջանոցները կամ խուսափում են, կամ հէնց բացարձակ չեն ընդունում տուբերկուլօզ ունեցող քիչ թէ շատ ծանր հիւանդներին, մանաւանդ նրանց, որոնք—ինչպէս թորախտաւորները—արիւն են թքում, կամ որոնց մարմնի շերմութեան աստիճանը բարձր է սովորական նօրմայից: Կարճ խօսքերով՝ առողջանոցները ընդունում են հիւանդութեան առաջին, ոչ ծանր շրջաններում կամ աստիճաններում գտնվող տուբերկուլօզի որեւէ տեսակ ունեցողներին:

Որո՞նք են առողջանոցների տուած արդիւնքները:

Առողջանոցների մէջ թորախտի բժշկութեան արդիւնքը որոշելու կամ գնահատելու համար պէտք է հիտվէյլերի պէս զանազանենք իսկական ըուծումը, այսինքն բոլոր օրգանների նօրմալ գործունէութեան վերանորոգումը և Կօխի բացիւնների իսպառ անհետանալը, և յարաքերաքար ըուծումը, այսինքն բարելաւութեան վերադարձը, ըստ որում բոլոր օրգանները լաւ են գործում, չը նայած հազի մի քանի թափերին և արեւածաղի քրտնքին:

Ըստ Կնօպֆի՝ իսկական և յարաքերական բու-

ժումները, նաև միայն բարելաւումների ամենափոքր թիւը, որ ստացվում է փակ հիմնարկութիւնների (այսինքն առողջանոցների) մէջ տուբերկուլօզը առողջապահական-անդական միջոցներով բժշկելով, հետեւեալն է. 70⁰/₀, որը այսպէս է բաժանվում՝ իսկական բուժում 14⁰/₀, յարաքերական բուժում 14⁰/₀, բարելաւումներ 42⁰/₀:

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Ն Ո Յ Ն Ե Ր

Ամեն երկրում առողջանոցները հիւանդներին ընդունում են յայտնի վճարով:

Այս վճարը լինում է զանազան չափերի, նայած թէ ինչ տեսակի առողջանոցներ են: Այսպէս անուանված ժողովրդական առողջանոցները (sanatoria populaires) օրական հինգ ֆրանկից աւել չեն վերցնում (ասել է՝ ամիսը մօտաւորապէս 60 րուբլի): Սրանք ամենաէական առողջանոցներն են համարվում, որովհետեւ սրանց յաճախող հիւանդները ժողովրդի ստորին խաւերից են՝ զանազան արհեստավորներ, մանր ծառայողներ, բանւորներ:

Իսկ միջին կամ բարձր, ունեւոր դասակարգերի յաճախած առողջանոցների զները համեմատաբար և աստիճանաբար աւելի և աւելի բարձր են լինում:

Այստեղ պէտք է յիշատակեմ և նկատեմ, որ ամբողջ Եւրօպայի պետութիւնների մէջ միայն Գերմանիան առաջին տեղն է բռնում ժողովրդական առողջանոցների մատչելիութեան տեսակէտից: Շնորհիւ բանւորական հարուստ զանձարկիների միլիարդներին՝ գերմանացի բանւորները ունեն զանազան հիմնարկութիւնների թւում և իրանց սեփական առողջանոցները, ուր և նրանք գտնում և ստանում են հարկաւոր դէպքում բժշկութեան ցոյց տուած բոլոր ժամանակակից ամենալաւ միջոցները և հիանալի հոգատարութիւն: Սակայն Գերմանիայի այս հարցում բռնած դիրքը մի բացառիկ երևոյթ է:

Այս էլ պէտք է ասել, որ գերմանացի հիւանդ բանւորը մեծ ուրախութեամբ է ժամ առաջ գնում ապաքինւելու հիւանդանոց կամ առողջանոց և այնտեղ էլ՝ այդ զանազան բուժարաններում նա հոգեկան ամենաանդորր դրութիւնով յանձնում է իրան բժշկական հոգատարութեանը, որովհետեւ նրա բացակայութեան ժամանակ նրա ընտանիքը նիւթական ոչ մի զրկանքի չէ երթարկվում, քանի որ բանւորական զանձարկը նրան անընդհատ տալիս է հիւանդ բանւորի աշխատանքի վարձատրութեան գումարը:

Այսպիսի մի հիանալի դրութիւն ստեղծվել է Գերմանիայում շնորհիւ երեք ոյժերի միացման, այն է՝ տէրութիւնը, գործարանատէրը և ինքը բանւորը: Սրանք երեքն էլ իրանց սահմանված բաժիններն ունեն յատկացվելիք բանւորական զանձարկին, որը և ունենալով անդամների ահագին միլիօնաւոր լեզէօն և իր զանձարկը ու գիզած միլիարդներ՝ հնարաւորութիւն ունի ստեղծելու այսպիսի հիանալի պայմաններ:

Եւրօպական ուրիշ պետութիւնները տարբեր չափով զուրկ են սրանից:

Իսկ մեզանում...

Մեզանում բոլորովին այլ դրութիւն է ստեղծվում, երբ մի բանւոր հիւանդանում է, երբ մի արհեստավորի բնակարանը հիւր է գալիս որեւէ մի երկարատե հիւանդութիւն: Մի շատ կարճ ժամանակից յետոյ թէ ինքը հիւանդը և թէ հիւանդի ընտանիքը կամայ-ակամայ պէտք է կուեն նրկու ահարկութիւնում հետ, մէկը միւսից դաժան, մէկը միւսից անսիրտ և անգութ՝ իսկական հիւանդութիւնը և այդպիսի պարագաներում նրա հաւատարիմ դաշնակից՝ թշուառութիւնը...

Այսպիսի պայմանների մէջ գտնվող մի թոքախտաւոր արհեստավոր կամ բանւոր իր հիւանդութեան հէնց ամենասկզբնական, թէկուզ և բժշկվելու համար

շատ նպաստաւոր շրջանում կարող է մտածել անգամ առողջանոցի մասին: Թող դա ամենաէական թէկուզ եւրօպական ժողովրդական առողջանոց լինի. կամ եթէ հասարակական բարեգործութիւնը այդպիսի առողջանոց ճրի առաջարկելու լինի նրան, կարող է նա անդորր հոգով և հանգիստ սրտով մտնել այդպիսի մի բարեացակամ հիմնարկութեան մէջ... Միթէ նա կը կարողանայ մոռանալ, որ ինքը, առողջանոց մըտնելով, առողջանոցից դուրս թողել է իր ամբողջ ընտանիքը առանց վաղվայ հացի ասպհովութեան...

Բայց և այնպէս տուբերկուլօզի մաքառման գործում գուցէ առողջանոցների տուած արդիւնքը այնքան մեծ է, այնքան օգտաւէտ, որ այս բոլոր անպատեհութիւնները չքանում են:

1905 թւականին Պարիզում կայացած տուբերկուլօզի միջազգային համագումարում հետեւեալ կարծիքներն են յայտնվել առողջանոցների մասին:

«Առողջանոցը մինչև օրս համարված է իբրև հակատուբերկուլօզային մաքառման յենակէտը, մինչդեռ նա միշտ կը մնայ նրա երկրորդական մի տարրը: Տուբերկուլօզը կարող է ամենուրեք, մինչև անգամ հիւանդի սովորական բնակավայրում, բժշկվել: Մասնաւոր բնակարանի առողջագործումը՝ բարակացաւոտին իր սեփական բնակարանումը առանձնացնելու հետ միասին՝ կը մնայ ուրեմն միշտ տուբերկուլօզի նախազգուշական գիտելիքների կամ գործադրելի միջոցների ամենագերագանց առարկան: Հասարակական միտքը չարաչար խաբված կը լինի, եթէ նրանից ծածկվի այս տարրական ճշմարտութիւնը»: (E. Béco)

«Ժողովրդական առողջանոցը չէ կարելի համարել հակատուբերկուլօզային մաքառ-

ման գլխաւոր գործիքը»: (Courtois Suffit և Laubry)

Ահա թէ ինչ փոփոխութիւնների է եւրօպայում ենթարկվել առողջանոցների վրա կազմված համոզմունքը, գաղափարը:

Այս փոփոխութիւնները, հարկաւ, կատարվել են գործնական արդիւնքների վրա հիմնվելով:

Այսպէս ուրեմն՝ այնտեղ, ուր մի 10—15 տարի սրանից առաջ ովսանաններ էին կարգում առողջանոցների հասցէին, ուր նրանց՝ առողջանոցների՝ վրա նայում էին իբրև փրկութեան իսկական հիմնարկութիւնների վրա, այսօր, 10—15 տարի անցնելուց յետոյ, մենք ականատես ենք լինում Ֆրանսիայի, աշխարհիս մտաւորականութեան կենտրոն՝ Պարիզի 1905-ի տուբերկուլօզի միջազգային համագումարի վերոյիշեալ արտայայտած երկնր տարիների փորձերի և ստացած արդիւնքների վրա հիմնված մտքերին, կարծիքներին:

Եւ ուշագրաւն ու անաչառութեան տեսակէտից համակրելին այն է, որ այդ կարծիքները յայտնող բժէշկները առողջանոցների կառավարող բժէշկներ են:

VIII

Դ Ի Ս Պ Ե Ն Ս Ե Ր Ն Ե Ր

Տուբերկուլոզի դէմ աջող մաքառելու ցուցմունքները գտնվում են նրա տարածման պայմանների մէջ:

Արդ՝ մենք տեսնում ենք, որ մի երկրում տուբերկուլոզը իր գլխաւոր բանակները սահմանում և կազմում է քաղաքներում և ոչ թէ գիւղերում, կարծես մի աւելորդ անգամ ևս ապացուցանելու համար, թէ քաղաքներն են երկրի բնակչութեան մտքի թէ լուսաւորման և թէ վարակման ու ապականման կենտրոնները, և միևնոյն ժամանակ ժողովրդական առողջութիւնը թուլացնող, նուազեցնող գլխաւոր ֆակտորները:

Քաղաքներում առհասարակ լաւ, օգտակար և լուսաւոր երևոյթների հետ խմբված է և կողք-կողքի գոյութիւն ունի վատը, միասակարը, անբարոյականը. հարստութեան, ճոխութեան և փարթամութեան կողքին տեսնում ենք վերին աստիճանի չքաւորութիւնը. ամբարտաւան և փառահեղ, արեւուատ լոյսով ու շրջապատող այգիների կենդանարար բուրաւի օդով օժտված ապարանքների հէնց կողքին գտնվում են օդագուրկ, լուսաղբատ, խոնաւ ներքնայարկեր, ուր սողունների փոխարէն մարդ-արարածը պատսպարում է իր կիսամերկ, սննդազուրկ և չարքաշ մարմինը տօթից, ցրտից ու բուքից... Ճոխ և լիառատ կերութեամբ սեղանների կողքին տնքում է ամենաէական սնունդի պակասութիւնը, «հանապազորդ հացի» բացակայութիւնը...

Ապա անառակութիւնը, ապա գինեմոլութիւնը...

Ահա երբ գիտնական ոյժերը քաղաքների այս բացասական կողմերի վրա դարձրին իրանց խորագէտ և անաչառ քննութիւնը, այն ժամանակ միայն երևաց, որ առողջանոցներ հիմնելով և կառուցանելով տուբերկուլոզը չէ սանձահարվում, դրանով նա իր զոհերի թիւը չէ պակասեցնում, որովհետեւ նրա զոհերի մեծագոյն լեզէօնները գտնվում են արդի քաղաքների խեղճութեան և թշուառութեան մէջ, ուր և միշտ, աւելի ու աւելի պարարտ հող է պատրաստվում տուբերկուլոզի կործանիչ և մահաբեր զօրքերը կազմող բացիլներին համար:

Ուրեմն սինչև այս ուղիղ համոզմունքի երևան գալը՝ եւրօպական հասարակական ոյժերի ունեցած միջոցները՝ առողջանոցների վրա դրած յոյսը՝ եղել է միայն մի կիսամիջոց (պալիատիվ):

Պէտք էր չարիքը ջնջել հէնց իր բնում, թշնամուն ջախջախել հէնց իր բանակում:

Ո՞վ կարող էր այսպիսի մի մեծ գործ կատարել աջողութեամբ:

Գիտութիւնը մատնացոյց էր արել իր հարազատ ոյժերից մինը՝ առողջապահութիւնը:

Եւ առողջապահութիւնը բարձրաբարբառ պահանջում էր օդ, լոյս, արև, սնունդ, ֆիզիկական ոյժերի գործադրութեան չափ (նօրմա), հեռու մնալ ամեն մի չափազանցութիւնից, մարմնակազմը չը քայքայել անառակութիւնով, գինեմոլութիւնով:

Գիտութիւնն ապացուցել է, որ տուբերկուլոզը ալկօհոլամոլութեան գաւակն է, տուբերկուլոզի բացիլը ալկօհոլի թոյնի ամենամտերիմ դաշնակիցն է:

Ուստի և հակատուբերկուլոզային մաքառումը՝ թուքին պատերազմ յայտարարելուց առաջ՝ թող կռիւ մղէ ալկօհոլամոլութեան դէմ, մի չարիք, մի պատուհաս, որ աւելի ահարկու է՝ քան տուբերկուլոզը,

որովհետև ծնեցնում է և սաստկացնում ու բարդացնում տուբերկուլոզը:

Թէ ինչ մեծ զոհաբերութիւն կարող է մի բնակչութիւնից պահանջել ալկոհոլամոլութիւնը, ահա մի պերճախօս օրինակ. այս 1912 թւականի փետրվար ամսի „Утро России“ օրագրի 31-դ համարում հետեւալ սարսափելի տողերն ենք կարդում:

«Սամարայի նահանգի բժշկական ընկերութեան ալկոհոլամոլութեան դէմ մաքառող բաժինը տեղեկութիւններ է հաւաքել, որ 1910 թւականին Սամարայի նահանգում 22 միլիօն բուբուլ օղի է խմված»:

Քսան երկու միլիօն բուբուլ օղի միայն մի նահանգում է խմվել մի տարվայ ընթացքում:

Եւրօպական տէրութիւնները արդէն աջող կերպով մաքառում են ալկոհոլամոլութեան դէմ, և այդ մաքառումը նշմարելի կերպով նուազեցրել է տուբերկուլոզի զոհերի թիւը:

*
* *

Բացի սրանից՝ եւրօպական քաղաքներում այժմ հիմնվում են մեծ թւով այսպէս անուանված ռիսպենսերներ:

Սրանք թաղական հիւանդանոցներ են երթևեկ հիւանդների համար (ամբուլատորիաներ), որոնց նպատակն է ձրի օգնութիւն տալ թէ արդէն տուբերկուլոզ ունեցողներին և թէ տուբերկուլոզի տեսակէտից կասկածաւորներին:

Բացի բժշկական բոլոր ժամանակակից մեթօդներով հասցրած օգնութիւնից՝ ռիսպենսները մատակարարում են չքաւոր յաճախողներին նաև դեղօրայք, կաթ, միս, հազուատեղէն, գտնում են նրանց համար առողջ բնակարաններ, հիւանդի լուացքը ախտահանում են:

Կան և այնպիսի ռիսպենսներ, որոնք ընդունում են ամեն մի չքաւոր հիւանդի, որ բռնված է առհասարակ հագով, բրօնխիտով և այլն, ու եթէ նրանք տուբերկուլոզի ոչ մի սկզբնական նշան չեն ունենում, նրանց արձակում են բժշկական քննութիւնից յետոյ. իսկ եթէ բարակացաւոտ են, նրանք ընդունվում են ռիսպենսերի հոգատարութեան մէջ:

Դժուար չէ հասկանալ այն մեծ գործը, որ անում են այդ փոքրիկ, համեմատաբար ոչ մեծածախս, բայց բազմաթիւ իսկապէս փրկարար հիմնարկութիւնները հէնց տուբերկուլոզի գործունէութեան դաշտում:

Այդպիսի ռիսպենսներ-հիմնարկութիւնները մեծ համակրանք և հաւատ են ներշնչում ազգաբնակչութեանը, ուր և շատ սիրայօժար կերպով յաճախում են հիւանդները:

Հիւանդը իր կողմից առանց որևէ զոհաբերութեան ու զրկանքի՝ իր հիւանդութեան հէնց առաջին նշաններից ստանում է համապատասխան ժամանակակից բժշկութիւն առանց իր տնից, իր ընտանիքից ու պաշտօնից հեռանալու:

Եւ պէտք է ասել, որ ռիսպենսներների արձանագրած թւերը ցոյց են տալիս պերճախօս կերպով, որ տուբերկուլոզի դէմ նրանք աւելի աջող են մաքառում, քան թէ առողջանոցները:

«Տուբերկուլոզի դէմ մեր մշտական և անդադար մաքառման գործը, — առաջարկում է յայտնի հանգուցեալ Հիւշարը, — սկսենք ամենից առաջ քաղաքներում և մարդաշատ կենտրոններում, վերացնելով այն թշուառ բնակարանները, վարակման և բնախօսական (ֆիզիօլոգիական) թշուառութեան այդ իսկական բները, ուր տկարանում և հիւժվում է այնքան մարդկային կեանք, ուր պա-

կասում է օդը, տաքութիւնը և լոյսը: Յետոյ հիմնենք, եթէ ուզում են, ժողովրդական առողջանոցներ, այն էլ առանց փարթամութեան, տալով նրանց գիտութեան պահանջած առողջապահական և կլիմայական պայմանները: Բայց հիմնենք մանաւանդ ղիսպենսերներ, որոնք աւելի սակաւ ծախսով և աւելի արդիւնաւոր կերպով կարող են առողջանոցների նման լինել առողջապահական կրթութեան հիմնարկութիւններ:

«Կուրորէն ստատիստիկաների ազդեցութեան տակ չընկնենք. չէ՞ որ այժմս նրանց՝ ուզվածը ասել են տալիս:

«Առողջանոցների առաւելութիւնների մասին քարոզելիս՝ չը մոռանանք, որ ամենայնաձախ փակ առողջանոցներում (sanatoria fermés) անգթաբար մերժում ու չեն ընդունում ծանր և անբուժելի հիւանդներին»:

Այժմս ամենուրեք ղիսպենսերներ են բացում մեծ և մեծ թւերով:

Սակայն մենք տեսանք, որ եւրօպական հասարակութիւնները մի առողջանոցով, մի ղիսպենսերով չեն բաւականանում թշնամու դէմ դուրս գալու համար. նրանք իրանց բոլոր ոյժերն են միացնում այսպիսի մաքառման համար: Ուստի և ստացված արդիւնքը մեզ համար անհաւատալի կարող է համարվել:

Նոյն Հիւշարը հակատուբերկուլօզային գործունէութեան մասին հետեւեալ մտքերն էր յայտնում.

«Ժառանգականութիւնը, վարակումը և թշուառութիւնը — ահա տուբերկուլօզի երեք ամենաուշագրաւ պատճառները: Եթէ մինը ժառանգում է աւելի շուտով հիւանդութեան տրամադրութիւնը, քան նրա սաղմը, թոյնը, եթէ մարդ բարակացաւոտ չէ ծնվում, այլ

ծնվում է բարակացաւին տրամադիր, պէտք է այսպիսի միջին հեռացնել բոլոր այն պայմաններից, որոնք ընդունակ են նրա հիւանդոտ տրամադրութիւնը փոխել իսկական բարակացաւի, այսինքն պէտք է նրան հեռացնել վարակումից, խիտ խոնված բնակարաններից, օդի և արևի պակասութիւնից, ալկոհօլամոլութիւնից և թշուառութիւնից:

«Միթէ առողջանոցը կարող է մի այսպիսի գործ կատարել. և ես հրաժարվում եմ ընդունել, թէ իբր բարակացաւոտները, միայն փակված լինելով, կարող են բարւոքել իրանց դրութիւնը, կամ գուցէ և բոլորովին առողջանալ»:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեզանում էլ շատ նպատակայարմար կը լինէր, որ տուբերկուօզի դէմ մաքառման գործումը հասարակական ոյժերն ի միջի այլոց դիմէին և դիսպէնսերներին, իսկ առողջանոցները թող մասնաւոր նախաձեռնութիւնը հիմնէ ունեւոր դասակարգի համար, ուր տուբերկուօզը աւելի ժառանգական հոդի վրա է սերված լինում:

Երբէք չը պէտք է մոռանալ, որ մի առողջանոց կառուցանելու համար այնպիսի մեծ գումար է հարկաւոր, որը կարող է առնուազն մի 10 դիսպէնսեր տալ:

* *

Այսպէս է Եւրօպան այժմ մաքառում տուբերկուօզի և առհասարակ վարակիչ հիւանդութիւններին դէմ:

Մաքառման հիմնաքարը այնտեղ առողջապահութիւնն է:

Իսկ մեզանում...

Մեզանում մինչև օրս համարեա ոչինչ չէ արված ոչ թէ տուբերկուօզի դէմ մաքառելու համար, այլ և առհասարակ ժողովրդի առողջութիւնը բարւոքելու համար:

«Մեր լայնատարած երկիրը (Կովկասը) բոլորովին չէ ուսումնասիրված բժշկական տեսակէտից: Բժշկական ստատիստիկան

գտնվում է դեռ ևս իր սաղմնական սկզբնական շրջանում: Ինչ վերաբերում է ահագին բժշկական նշանակութիւն ունեցող երկրի բնական հարստութիւնների գիտական մշակմանը, այդ կիրագործվի երևի միայն ամենահեռու ապագայում: Վաղուց արդէն ժամանակն է պարզելու համար, թէ ի՞նչ դրութեան մէջ է գտնվում երկրիս բժշկական գործը: Հիւանդութիւնների տարածման քննութիւնը, նրանց տարածման պատճառները, արտայայտվելու եղանակը որոշելը, ծնունդների, յաւելումների, հիւանդացումների, մահացութեան, երկարակեցութեան իսկական հաշիւը — բոլոր այս հարցերը ահագին և ուշադրաւ նշանակութիւն ունեն և վաղուց սպասում են իրանց գիտական մշակման: Վաղուց հարկաւոր էր ճշդագրել, թէ մինչև օրս ի՞նչ է արված ժողովրդական առողջութիւնը պահպանելու համար, և գլխաւորապէս որոշել բժշկական կարիքի չափսերն ու ընդգծել այն ճանապարհը, որով պիտի ընթանայ երկրիս բժշկական գործը»:

Այս մտքերը յայտնում է Կովկասի բժշկական բաժնի գլխաւոր քաղաքացիական կառավարիչ՝ դօկտօր Ֆ. Լ. Ֆեխները, մի կարող անձնաւորութիւն, որի ձեռնհասութիւնը այս հարցում արժանի է ամենայն վստահութեան *):

Մենք առիթ կունենանք մի քանի անգամ դիմելու յարգելի հեղինակի նորերս լոյս ընծայած այս տեղեկագրին:

*) Д-ръ-мед. Ф. Л. Фехнеръ. „Отчетъ о состояніи народнаго здравія и организація врачебной помощи въ Закавказіи за 1910 г.“, Тифлисъ, 1911.

* *

Առողջապահութիւնը իբրեւ դասաւանդութեան առարկայ բոլոր ուսումնարաններում չէ մտցված, եղած դասաւանդութիւնն էլ կցկտուր կերպով է անվում, շաբաթական մի, ամենաշատը՝ երկու դաս:

Ակնյայտնի երևում է, որ առողջապահութեան վրա թէ կառավարական, թէ մասնաւոր շրջաններում նախուհ են ոչ իբրեւ մի շատ կարեւոր գիտելիքի, այլ իբրեւ մի ճոխութեան վրա, որ կարելի է ունենալ, բայց կարելի է և աչքաթող անել:

Եթէ հասկացող շրջաններում այսպիսի տրամադրութիւն է տիրում, ապա ի՞նչ ասել հասարակութեան այն խաւերի վերաբերմամբ, որոնք, առհասարակ տեղեակ չը լինելով առողջապահութեան հասցրած բարիքների մասին, ապրում են հակաառողջապահական պայմանների մէջ և դրանց էլ զոհ են դնում շատ դէպքերում:

Վերցրէք հէնց մեր գիւղական շրջանը և գիւղական ժողովուրդը: Չը նայելով որ այս վերջինս ապրում է գիւղական սքանչելի օդում, չը նայելով որ գիւղերի մեծամասնութիւնը աղբիւրների հիւանալի բիւրեղանման ջրեր ունի, այսու ամենայնիւ գիւղերում երեխաների մահացութիւնը սարսափելի է շնորհիւ տարափոխիկ հիւանդութիւնների գործած ալանթալանների... և այս՝ շնորհիւ այն կեղտոտութեան, որի մէջ ապրում է գիւղացին:

Առողջ և մաքուր կենցաղավարութեան որևէ տարրական հասկացողութիւնից զուրկ գիւղացին — այս XX դարում՝ իր վայրենի նախահայրերի նման — ապրում է մեր Կովկասի շատ տեղերում գետնի տակ և իր լծկան անասունների կողքին՝ լոյսից, արևից և մաքուր օդից զուրկ...

Այս դեռ բաւական չէ, գիւղացին միշտ իր գիւ-

ղից դուրս, դէպի քաղաքներն է ձգտում աշխատանքի յոյսով:

Սակայն գիւղից եկած առողջակազմ երիտասարդ ուժերը, մի քանի ժամանակ ապրելով քաղաքներում, կորցնում են իրանց առողջութիւնը շնորհիւ քաղաքների նրանց համար աննպաստ պայմաններին, գինեմոլութեանն ու վեներական հիւանդութիւնների հիւծող թոյնին...

Եւ այսպիսիների մեծամասնութիւնը իրանց օջախը վերադառնալով՝ վարակում է իրանց ընտանիքը տուբերկուլօզով, սիֆիլիսով և սրանց նման ուրիշ ախտերով, որոնք և գիւղական նահապետական ընտանիքի քայքայման պատճառներն են սկսել դառնալ...

Իսկ ընտանիքի մի անդամի ֆիզիկական քայքայումը շատ յաճախ բարոյական անկման պատճառ է դառնում միւս անդամի համար...

Մեր քաղաքներումն էլ աւելի լաւ ու միտիթարական դրութիւն չէ տիրում, եթէ ուշի ուշով և խորապէս քննելու լինենք դրանց առողջապահական դրութիւնը:

Քաղաքներում բնակչութիւնը աւելի խիտ և կուտակված է ապրում շնորհիւ բնակարանների վարձի սղութեան, ուրեմն և մաքրութիւն պահպանելու հնարաւորութիւնը աւելի սակաւ է. սրանից էլ առաջանում է օդի ապականութիւնը: Շատ քաղաքներ մինչև անգամ մաքուր ջուր ունենալուց զուրկ են, կամ թէ յարմար ջրմուղներ չունեն, որից և տուժում է քաղաքացի ժողովուրդը և որի շնորհիւ վարակիչ հիւանդութիւնը օր օրի վրա զարգանալով համաճարակի է փոխվում:

1892 թւականի խօլերան այս տեսակէտից շատ յարմար բուն է դտել իր համար Պետերբուրգում և մինչև այսօր, ամբողջ 20 տարվայ ընթացքում, այնտեղից հեռանալու տրամադրութիւն չէ ցոյց տալիս:

Եթէ մի պետութեան մայրաքաղաքը առողջապահական այսպիսի պայմաններէ մէջ է գտնուում, էլ ինչ պահանջել փոքր, գաւառական քաղաքներէ...

Մեր շուկաները համարեա թէ առողջապահական հսկողութիւնից զուրկ են. իսկ շուկաներում ծախվող կենսական մթերքները, շնորհիւ այժմ տիրող անբարեխղճութեան, այնպիսի խարդախված բաղադրութիւններէ են ենթարկվում, որից և առաջանում են ստամոքսի ու աղիքների զանազան հիւանդութիւններ, որոնք չարաչար քայքայում են ժողովրդական առողջութիւնը:

Կարճ խօսքով՝ մենք մինչև այսօր գտնուում ենք միայն բնութեան ոյժերի ազդեցութեան տակ. մարդկային մտքի ոյժի ազդեցութիւնը, կարծես, դեռ ներհաժ է մեր մէջ:

Սակայն հիւանդութիւնը, տուբերկուլոզը, սիֆիլիսը, ալկոհոլամոլութիւնը չեն ներհում. նրանք միշտ արթուն են և ամենայն քարենդոլութեամբ ու մինչև անգամ իրար հետ մրցելով՝ քանդում են ու կործանում մեր ժողովրդի առողջութիւնը:

Դժբախտ ֆէխսների յիշած տեղեկագիրը կարգալիս՝ զարհուրում ու ապշում ես, թէ հիւանդութիւնը, իրան ազատ զգալով առողջապահութեան որևէ հսկողութիւնից, ինչ աստիճան տիրապետել է մեր Կովկասի բնակչութեանը:

Ահա մի նմուշ:

1910 թվականի ընթացքում ամբողջ Կովկասում հիւանդացել են՝	
Մալարիայով	481,108 մարդ
Քոսով	62,358 »
Ինֆլիւէնցայով	42,547 »
Տրախոմայով	27,187 »
Սիֆիլիսով	21,156 »
Դիֆթերիայով	17,223 »

Թոքախտով	16,675 մարդ
Ասիական խօլերայով	10,461 »
Աղիքների տիֆով	10,415 »
Կապոյտ հազով	6,894 »
Սկարլատինայով	6,237 »
Կարմրուկով	5,609 »
Ծաղիկով	4,205 »
Դիֆթերիտով	2,948 »
Զանազան հիւանդութիւններով	1,404 »
Բժաւոր տիֆով	729 »
Րեկուրենտ-տիֆով	379 »

Ընդամենը 717,535 մարդ

Ընդամենը 717,535 մարդ, այսինքն մեր Կովկասի բնակչութեան համարեա մի-տասներորդ մասը մի տարվայ ընթացքում հիւանդացել է վարակիչ հիւանդութիւններով:

Ահռելի թիւ...

X

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Պէտք է անպայման դնել մեր կեանքը առողջապահութեան արթուն հսկողութեան տակ:
Ժողովուրդը պէտք է կրթել առողջապահական կանոններով:

Ժողովրդին պէտք է աւանդել առողջապահութիւնը:
Առողջապահութիւնը պէտք է ժողովրդի համար
ժ ' պահանջ դարձնել:

Եւ այն ժամանակ հարկ չի լինի վարակիչ հիւ-
ւանդութիւնների մեր երկար ցուցակից միայն տու-
բերկուօդը վերցնել և նրա վրա տարածել մեր հոգա-
տարութիւնը:



<< Ազգային գրադարան



NL0273853

Հրայ

ԲՈՒԿ ԲԱՆԿ
 9/10/60
 10 11-4

ԳԻՆՆ Է՝ 25 ԿՈՊ.

— * —

Դիմել հեղինակին՝ Բժ. Ա. ՇԽԵԱՆԻՆ, Գանութակայա փող.
 № 15. Թիֆլիս:

10